Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 6 «Արևիկ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ **հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.**

1. Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ՝ 1,25 դրույքային միավոր
2. Կրտսեր 1-ին խմբի դաստիարակ՝ 4,2 դրույքային միավոր
3. Դաստիարակ՝ 7,02 դրույքային միավոր
4. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ՝ 1 դրույքային միավոր
5. Երաժշտության դաստիարակ՝ 1 դրույքային միավոր
6. Հատուկ մանկավարժ՝ 1 դրույքային միավոր
7. Հերթապահ դաստիարակ՝ 0,59 դրույքային միավոր

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մեթոդիստի՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալի որակավորման պահանջները՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Կրտսեր 1-ին խմբի դաստիարակի, դաստիարակի, հերթապահ դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջները՝միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որոկավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց):

ֆիզկուլտուրայի հրահանգչի որակավորման պահանջները ՝միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Հատուկ մանկավարժի որակավորման պահանջները ՝բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ:

Դիմող քաղաքացիները թիվ 6 «Արևիկ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. օգոստոսի 17-ից սեպտեմբերի 11-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը:

Մրցույթը կկայանա 2026 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 6 «Արևիկ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում /հասցե՝ ք. Էջմիածին Մ. Մեխակյան 35/2 /:

Տեղեկությունների համար զանգահարել 0231-5-43-33, 077 60-96-46 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մեխակյան 35/2

Էլ. հասցե՝ tiv6arevik@mail.ru